

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ)

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Դասիչը Մասնագիտությունը	Դասիչը Կրթական ծրագիրը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի քանակը
061101.00.7 Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)	061101.03.7 Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	2
022801.00.7 Արևելագիտություն	022801.02.7 Թուրքագիտություն	1
041301.00.7 Կառավարում	041301.01.7 Կառավարում	1
	041301.04.7 Գործարար վարչարարություն /կառավարում/	1
041401.00.7 Շուկայագիտություն (մարքեթինգ)	041401.01.7 Շուկայագիտություն (մարքեթինգ)	1
041201.00.7 Ֆինանսներ	041201.01.7 Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	1
042101.00.7 Իրավագիտություն	042101.01.7 Իրավագիտություն	1
071403.00.7 Ռադիոտեխնիկա և կապ	071403.02.7 Հեռահաղորդակցություն	1
031301.00.7 Հոգեբանություն	031301.08.7 Մոցիալական և քաղաքական հոգեբանություն	1
031801.00.7 Միջազգային հարաբերություններ	031801.01.7 Միջազգային հարաբերություններ	1
052201.00.7 Բնապահպանություն և բնօգտագործում	052201.01.7 Բնապահպանություն և բնօգտագործում	1
052101.00.7 Շրջական միջավայրի գիտություններ	052101.01.7 Շրջական միջավայրի գիտություններ	1
051101.00.7 Կենսաբանություն	051101.08.7 Մոլեկուլային և բջջային կենսաբանություն	1
091601.00.7 Ֆարմացիա	091601.02.7 Դեղագիտություն	1
054101.00.7 Երկրաբանություն	054101.02.7 Կիրառական սեյսմոլոգիա	1
023201.00.7 Լեզվաբանություն	023201.11.7 Ընդհանուր և հայ լեզվաբանություն	1

Մագիստրատուրայի առկա ուսուցմամբ անվճար համակարգ ըստ մասնագիտությունների կարող են դիմել միայն ընթացիկ տարվա ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք, որոնք ավարտական աշխատանքի պաշտպանությունից և ամփոփիչ ատեստավորման քննությունից ստացել են 13 /20 բալանոց համակարգ/ և բարձր միավորներ, իսկ ավարտական փաստաթղթի՝ դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին որակական գնահատականը /ՄՈԳ-ը/ կազմում է առնվազն 13:

Մրցույթն անցկացվում է քննության ձևով՝ ըստ նախապես հրապարակված համապատասխան հարցաշարի (մանրամասները տես՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրատուրայի ընդունելության կարգում, կայք՝ www.isec.am):

Դիմորդները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենի անունով՝ նշելով ընտրած մասնագիտությունը
- բարձրագույն կրթության դիպլոմ, դիպլոմի ներդիր և պատճեններ,
- զինվորական կցագրման վկայականի բնագիր և պատճեն
- անձնագիր կամ նույնականացման քարտի պատճեն
- երեք լուսանկար (3x4 չափի)
- հրատարակված կամ հրատարակման ընդունված գիտական աշխատությունների ցուցակ /դրանց առկայության դեպքում/

Փաստաթղթերը դիմորդը ներկայացնում է անձամբ կամ լրացնում է առցանց դիմում՝ կցելով անհրաժեշտ փաստաթղթերը:

Դիմումները ընդունվում են մինչև ա/թ հունիսի 25-ը ներառյալ:

Երևան, Մ. Բաղրամյան 24դ, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, 2-րդ հարկ, 2,5 սենյակ, հեռախոս՝ 524812. 093252072